ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՒԹԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

31.01.2012 ԳԻՐՔՅՈՒՆ N 1

Համայնքի ղեկավարի 2011 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ: Մասնակցում էին Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Տ-ի և ՀԳՄ հարցերով վարչության պետ՝ Ի. Ասատրյանը, համայնքի ավագանին և բնակչությունը:

ՕՐԱԿԱՐԳ

Համայնքի ղեկավարի 2011 թ. տարեկան հաշվետվություն:

Կատարված աշխատանքները գնահատվեցին բավարար:

(Կից տարեկան հաշվետվությունը)

Ժողովի նախագահ, համայ. ղեկ. օգնական՝ Ա. Հախումյան

Ժողովի քարտուղար, աշխատ. քարտուղար՝ Գ. Ավագյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Կութ համայնքի ղեկավար՝ Մ. Իսրայելյանի 2011 թ. կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր, ավագանու անդամներ իմ կողմից ներկայացվող հաշվետվությունը ընդգրկում է 2011 թ. ընդացքում կատարված գործնեությունը:
Կութ համայնքում կատարված աշխատանքների և բյուջեի կատարողականի մասին է:
Կութ համայնքը հայտնի է իր բնակլիմայական ոչ բարենպաստ պայմաններով: Համայնքը ծովի մակերևույթից գտնվում է 2060 մ. բարձրության վար, նախկին շրջկենտրոնից գտնվում է 16 կմ. հեռավորության վրա, իսկ մարզկենտրոնից 78 կմ: Համայնքում ապրում են 232 բնակիչ, որոնք հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Կութ համայնքում չկա մանկապարտեզ, չի գործում մշակույթի կենտրոնը և գրադարանը: Համայնքի ջրագիծը ենթակա է վերանորոգման, գործող ճանապարհը գտնվում է քանդված և անմխիթար վիճակում, որը ձմռանը դառնում է անանցանելի, որի մաքրման և հարդեցման աշխատանքները կատարվում է համայնքի ղեկավարի անձնական միջոցներով: 2010թ. հունիսի 27-ից Մ. Իսրայելյանը ընտրվել է համայնքի ղեկավար և մինչ օրս համայնքի սոցիալտնտեսական զարգացման նպատակով բարեփոխումների ոչ մի ծրագիր չի իրականացվել, իսկ գյուղապետարանը չունի համապատասխան ֆինանսական և նյութական հնարավորություններ այդ խնդիրների լուծման համար: Կութ համայնքը ունի բավարար արոտավայրեր և խոտհարքներ, որի հիման վրա կարելի է զարգացնել գյուղատնտեսության անասնապահության ճյուղը:
Կութի գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 5 անդամից, ովքեր իրենց աշխատանքային գրծնեության ընդացքում բարեխղճորեն կատարում են գյուղապետարանի սեփական եկամուտների հավաքագրումը: Գյուղապետարանը ունի նախորդ տարիների աշխատավարձի ապառքներ՝ 3761.4 հազ.դրամ, սոց-վճար՝ 321.0 դրամ, 2011 թ. ընթացքում Մ. Իսրայելյանը մարել է նախորդ տարիների աշխատավարձի ապառք՝ 2000.0 դրամ, կատարել է իր առջև դրված բոլոր առաջադրանքները: 2011 թ. սեփական եկամուտները ունի հետևյալ տեսքը՝

1. Հողի հարկ՝ 1052.0 պլանային, կատարվել է 75.3 %-ով,
2. Գույքահարկը՝ 56.0 պլանային, կատարվել է 66.4%-ով,
3. Հողի վարձավճարը՝ 1512.0 պլան. կատարվել է 117.5 %-ով,

Ընդամենը սեփական եկամուտների կատարողականը կազմել է 99.5%:
Բոլոր եկամուտները ծախսվել է աշխատավարձի և սոց-վճարների մարումների համար:
Որպես համայնքի ղեկավար հավաստիացնում եմ, որ բոլոր անհրաժեշտ միջոցները կձեռնարկեմ համայնքի սոցիալտնտեսական խնդիրների լուծմանը, հետևողական կլինեմ համայնքի բյուջեն բարձր տոկոսի կատարման ուղղությամբ:

Համայնքի ղեկավարի աշխատանքները գնահատվեց բավարար, ժողովի և ավագանու անդամների կողմից:

Ժողովի նախագահ, համայ. ղեկ. օգնական՝ Ա. Հախումյան

Ժողովի քարտուղար, աշխատ. քարտուղար՝ Գ. Ավագյան